Իրենց առեւտրական եւ պաշտօնական շահերի ինչպէս նաեւ ռուսական վարչութեան հետ ունեցած ամէն կարգի կապերի բերումով 1827–ից ի վեր Պասկեւիչի ձեռքով պարսիկներից խլուած Հայկական Նահանգների բնակիչները, շարունակում է Բ., աւելի յարամարուող են եւ օգտակար գործիք են ցարի ձեռքին, քան՝ հսկայական Ռուսաստանին կցուած երկրամասերից ոեւէ մէկը:

* * *

Այնուհետեւ Բողենշտէդտ մի ակնարկ է նետում մեր պատմական անցեալի, ինչպէս նաեւ հայ մատենագրութեան վրայ: Նոյն խնդրին է վերաբերում նաեւ «Քրիստոնէութեան մուտքը Հայաստան» գրքոյկը: Ե՛ւ այստեղ, Ե՛ւ առաջին աշխատութեան մէջ այդ խնդիրների մասին նաեւ մի քանի հետաքրքրական դիտողութիւններ է անում: Նա առաջիններից մէկն է եղել առահասարակ, որ ուշադրութեան առարկայ է դարձրել հայ դիցաբանութիւնը, ինչպէս նաեւ մեր մատենագրութեան մէջ պահուած հնագոյն առասպելները:

Մի գեղեցիկ ոտանաւոր — փոխադրութեամբ (Խորենացուց առնելով) էլ նա գերման ընթերցողներին ծանօթացնում է Արտաշէսի եւ Սաթենիկի պատմական աւանդութեան հետ:

Այս յօդուածի առաջին մասում, ուր խօսք եղաւ Անդրկովկասի եւ հայութեան վիճակագրութեան շուրջը, արդէն յիշատակութիւն արինք այն ժամանակները գոյութիւն ունեցող վարչական բաժանումների մասին: Իսկ ինչ վերաբերում է Հայաստանի եւ հայ ժողովրդի տնտեսական եւ ընկերային կեանքի պայմաններին, ժողովրդական զբաղումներին, Բ.-ի մօտ դժբախտաբար շատ աւելի քան չենք գտնում, քան այն հատուկտոր տեղեկութիւնները զաղութահայ վաճառականների եւ Հայաստանի հողագործ բնակչութեան մասին, որ առաջ բերինք վերը:

Ախալցխայի հայութեան մասին խօսելիս Բ. ասում է, որ շատ հայեր հռչակուած են որպէս ճարտար արհեստաւորներ: «Առանձին գնահատութեան են արժանացած այդտեղ պատրաստուող երկաթեայ եւ պողպատեայ գործիքները, որ եւ արտածւում են: Ցիչատակութեան արժանի են նմանապէս տեղւոյն զինագործները» («Կովկ. Ժող.», 168):

Ինչպէս իր գլխաւոր աշխատութեանց մէջ («Կովկ. Ժող.», «Հազար ու մի օր»), այնպէս եւ իր «Յուշեր»ում Բողենշտէդտ, որչափ եւ ժլատ, բայց եւ այնպէս աւելի տեղեկութիւններ է տալիս Ախալցխայի եւ Ախալքալաքի, քան Երեւանի հայութեան ներքին պայմանների մասին:

Բուն երկրում ծնուած հայերը, ասում է նա, մեծ մասով կաթոլիկ են: Էրզրումից գաղթած հայերից յատկապէս նրանով են տարբերւում, որ աւելի շատ թաթարերէն ու վրացերէն են խօսում քան՝ մայրենի լեզուով: «Հակառակ այն բազմաթիւ յոռի յատկութիւններին, որ հայերի մէջ առաջացրել են մի կողմից չարչիական մտայնութիւնը եւ միւս կողմից տաճկական ճնշումը, եւ ռուսների հետ ունեցած կապը, այնուամենայնիւ նրանք փաչայութեան (Ախալցխայի) ամենէն լուսամիտ, ամենէն գործունեայ տարրն են»:

Մի ուրիշ առթիւ («Հազար ու մի օր», Ա. 222) Բ. ասում է. «Որչափ որ Ախալցխայի հայերի տները մաքուր են եւ գրաւիչ, այնչափ էլ վրացիներինը եւ հրեաներինը՝ կեղտոտ»:

Ղարաբաղի մասին խօսելիս հեղինակը ասում է, որ ժողովրդի գլխաւոր զբաղումը անասնապահութիւնն է, քանի որ այդ բարձրադիր լեռնաշխարհը յարմարութիւններ չէ ներկայացնում երկրագործութեան համար: Բայց եւ այնպէս, դիտում է նա, հովիտներում յաջողութեամբ զբաղւում են նաեւ գինեգործութեամբ ու մետաքսագործութեամբ: Ամբողջ Կովկասում հռչակուած են նաեւ Ղարաբաղի ձիերը՝ իրենց գեղեցկութեամբ, արագավազութեամբ ու տոկունութեամբ: «Ղարաբաղը անցեալում գտնուել է մերթ հայերի, մերթ թուրքերի եւ մերթ պարսիկների տիրապետութեան տակ: Պարսից դաժան Աղա-Մահմադ-Խան Շահը, Շուշին առնելու միջոցին (1797), դտաւ իր մահը: Ռուսների ձեռքն ընկաւ Ղարաբաղը առաջին անգամ 1805–ին, իսկ վերջնապէս՝ 1822–ին:

Ինչպէս եւ Ղարաբաղը, այնպէս էլ Գանձակը եղել է մերթ հայերի, մերթ էլ պարսիկների կամ թուրքերի տիրապետութեան տակ, մինչեւ որ 1804–ին ռուս Ցիցիանով զօրավարը